

Այս ճաշոցը կազմուած ու նորոգուած է «ի խնդրոյ» Ս. Լուսաւորչի Աւագերէց Տէր կոչուեալի, 1656ին: Նոյն միջոցին «այնմ գահի» (= Ս. Լուսաւորչի) «Էծ-շո-+ իշխաններն ու երէնք-խաններն են»:

Խոճայ Գանիէլ

» Մկրտիչ

» Սողովման

» Քրիստոսաւոր

» Եկոտիար

» Սուրառ

» Եղիա

1661. — Ա-է-ր-ա-ն. ազնիւ մագաղաթի վրայ երկաթագիր, երկիջէան, սիրուն նկարներ, գոյները զերար բռնած, լաւ պահուած: Գլխագրերուն շատերը չեն գրուած. անշուշտ կարմրագեղով գրելու կամ զարդագիրներով պճնելու համար յետաձգուած՝ եւ մնացած է այնպէս: Յովհաննու Աւետարանին վերջը կցուած է «Էր ընդ եղբարսն», Յովհաննու հանգիստը:

Յիշատակարանները գրուած են 1. Մատթէոսի վերջը, ուր թուականն է դեռ (1659). 2. Յովհաննու Հանգիստէն ետքը «աւարտումն եղել Ս. Աւետարանիս թվ. ՌՃԺ (= 1661) ի Յունվարի Դէին». 3. Մարկոսի վերջը որ ամէնէն ընդարձակն է.

«Յակոբ գծողս աղաչեմ յիշելն եւ այլն»

«Թվին. ՌՃԺ (= 1661) Գրեցաւ ի վէնէտիք. Լեռամբ անարժան Յակոբի, որդւոյ ձիք Տէր Ստեփաննոսի քահանայի ջուղայեցոյ, ի դուռն Սուրբ Մարկոս Աւետարանչին եւ այլ ամենայն բազմագումար սրբոցս, որ աստ կան հաւարեալ...»

4. Ղուկասու Աւետարանին վերջը.

«Բազմամեղ Յակոբ գծողս եւ զհայրն իմ զձիք Տէր Ստեփաննոս քահանայն՝ եւ զեղբայրն իմ զԲարսեղ վարդապետն եւ զմայրն իմ զԱննային»...